Ը. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 6 ԱՊՐԻԼ 1905 — ԹԻՒ 703

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ ֆր. երկիրն ուրիշ անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

—o—

Վաճառքի համար ձեռքի 10 սանթիմ

ԱՐԱԶՈՒՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ · ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ (Bulgarie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԿ ՎՃԱՐԷ»

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անակնկալ Բագու մեկնելուս եւ սաստիկ զբաղուած լինելուս պատճառով, թէեւ ուշ, բայց էլի կարենում եմ մի քանի խօսք ասել այն սրտայոյզ ու ոգեւորիչ հանդէսի մասին, որ կատարուեց Թիֆլիսում, Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին, մարտի 13ի կիրակի օրը։

Արդեօք հարկ կա՞յ ասելու, թէ ո՞վ եւ ի՞նչ էր Քրիստափոր Միքայէլեանը եւ ի՞նչ կորցրեց հայ ժողովուրդը յանձին նորա։ Արդեօք պէտք է՞ չափել այն պարապը, որ իր յետեւից թողեց Քրիստափոր Միքայէլեանի մահը, այն խորունկ սուգը եւ բուռն ափսոսանքը, որ այդ մահն առաջացրեց հայ ազգի գիտակից մասի սրտում։ Դրանք լիովին հասկանալի եւ զգալի են այն ամէնքի համար, որոնք զէթ ամենափոքր չափով ծանօթ են մեր դառն իրականութեանը եւ հայ գործչի տաժանելի ճանապարհին։ Հայ գործիչների անապատում Քրիստափորի փոքր եղբայրներ մենք շատ քիչ ունենք, դրա հակառակ, որչա՛փ շատ պէտք կայ այդպիսիների։ Ծանր եւ անփոխարինելի էր այդ կորուստը եւ հայ ազգը զգաց ու յարգեց նրան, կարելի է ասել, արժանաւոր կերպով։

Թիֆլիսում մարտի 13ը հայերիս համար սովորական օրերից չէր։ այդ օրը Քրիստափոր Միքայէլեանի հոգեհանգստի հետ միաժամանակ կատարվում էր եւ մեր տաղանդաւոր կոմպոզիտոր, հոգեւոր երաժիշտ, Մակար Եկմալեանի թաղումը։ Վանքի մայր եկեղեցում հանգուցեալին յարգելու համար հաւաքուել էր հասարակութեան ահագին բազմութիւն, որը ուղեկցեց նրան մինչեւ գերեզմանատուն եւ լսեց արտասանուած զգայուն ճառերը։ Զնայած այդ հանգամանքին, ժամը 12ին Մուղնու Ս. Գէորգ եկեղեցին, ուր նշանակուած էր Միքայէլեանի հոգեհանգիստը նրա ընդարձակ գաւիթը, դիմացի փողոցը եւ շրջակայ տների պատուհաններն ու պատշգամբները ամբողջովին լցուել էին ժողովրդով։ Հասարակութեան մէջ, բոլորովին ազատ, ցրուում եւ կարդացւում էր բիւրօի հրատարակած հայերէն եւ ռուսերէն լեզուներով, սա՛, սե՛ւ շրջանակի մէջ տրուած մահագոյժը։ Միեւնոյն հոգեկան տրամադրութիւնը, միեւնոյն սուգի զգացմունքն էր համակել ամբողջ բազմութեան սիրտը։ հաւաքուել էին մեծ մասամբ հասարակութեան բարձր եւ ինտէլիգէնտ շրջաններից։ կային շատ յայտնի անձինք, որոնք մնացին մինչեւ ահագին ժամեր տեւող հանդէսի վերջը։

Եկեղեցական դասը դուրս եկաւ գաւիթ տխուր հանդիսաւորութեամբ եւ ահագին բազմութեան վեհ լռութեան մէջ, ամենահանդիսաւոր կերպով կատարեց հոգեհանգստի արարողութիւնը։ Դրան հետեւեցին ժողովրդի միջից եօթ հոգու խորը ըզգացուած, ազատ, զգայուն եւ ոգեւորուած ճառերը, որոնց ամէն մէկին հասարակութիւնը պատասխանում էր բուռն ոգեւորուած ծափերով։ Մեր սուգը յարգելու եւ նրան մասնակից լինելու եկել էին եւ օտարազգիներ։ Այդպէս՝ մի վրացի, վրաց կողմից, վրացերէն լեզուով խօսեց յուզուած մի ճառ։ Նոյնպիսի մի ճառ, ռուսերէն լեզուով, խօսեց եւ մի հրէայ։ Այդ բոլոր ճառերի ժամանակ մենք մոռացել էինք, թէ գտնուում ենք ռուսական բռնակալ ռէժիմի երկրում. մեզ թուում էր, թէ ազատ ենք, գտնուում ենք ազատ Հայաստանում եւ մեր շուրջն ամբողջ հարազատ է մեզ, զգում, շնչում է հայի պէս. չկայ այլեւս օտարի բռնակալ ձեռքը. նա չի խեղդում մեր զգացմունքները, չի կաշկանդում մեր լեզուն։ Իրօք ի՞նչ էր այն օրը. պէտք էր այնտեղ լինել, պէտք էր լսել այն կրակոտ եւ ծայրահեղ ազատութեամբ ներշնչուած ճառերը։ Օ՜, ինչեր էին անցնում մեր գլխով, ինչ յոյզեր էին փոթորկում մեր սիրտը։ Դեռ երբէք այնքան մօտիկից չէինք զգացել ազատութեան կենարար բոյրը, դեռ երբէք մենք մեզ այնքան ծարաւ չէինք զգացել նրան։ Մենք ազատութեան համար մարտնչողներ ենք, մենք հայկական ազատագրութեան զինուորներ ենք, բայց իսկապէս չը գիտենք ինչ է ազատութիւնը։ Մենք միայն զգացել ենք գարշահոտ բռնութեան անտանելիութիւնը եւ ձգտում ենք դէպի ազատութիւն. մենք նրա անունը միայն գիտենք. բայց երբ կըմբռնենք ազատութիւնն իր ամբողջ էութեամբ եւ կըզգանք նրա բուրաւէտ շունչը՝ իր ամբողջ խորութեամբ, օ՜. այն ժամանակ այլեւս ոչ մի բռնութիւն չի կարող դիմադրել մեզ, երբ կը ձգտենք, կը թոչենք դէպի նուիրական ազատութիւնը...

Ազատ էր այդ օրը մեզ համար եւ ազատութեան մէջ, ազատութեամբ, իրան վայել արժանաւորութեամբ յարգուեց ազատութեան համար մարտնչողի եւ այդ ազատութեան ճանապարհին նահատակուած Քրիստափոր Միքայէլեանի յիշատակը։ Օ՜, յաւիտեան անշէջ կը մնան մեր սրտերում յոյզերն ու յիշատակ, ո՛վ անմոռանալի եւ պաշտելի գործիչ։

Օ՜, տուէք մեզ ազատութեան այդպիսի կայծեր, որ մենք նրանցով հրդեհենք մեր ժողովրդի հանգած, մարած սրտերը...

Ֆուլլագ

22 մարտի, 905
Բագու

ՎԻԺԱՄ ԾՐԱԳԻՐ ՄԸ

—oo—

Դէպքեր ու գաղափարներ կան, որոնք զայրոյթի, ընդվզումի արդարացի զգացումի մը հետ սեւ յոռետեսութիւն մը կը պատճառեն մեզ։

Այս պահուս՝ երբ դարերու տգիտութեան երկանիկ քնով խաղաղօրէն մրափող ռուս մուժիկը՝ արթնցած իր թմրած մկանուքները կը ձգտէ, առողջ թոքերուն ամբողջ ուժով ազատութեան գեփիւռը շնչելով՝ ազատութեան, որուն լուսաշող արշալոյսը կսպասէ շուտով տեսնել, անչուշտ իր բուունցքներու ուժին շնորհիւ, այս պահուս՝ երբ ամբողջ մարդկութեան մեծագոյն մասը, մտածող մասը կը ձգտի զինուորականութեան տապալման, թագաւորութիւններու՝ այդ այլանդակ և անբնական դրութիւններու զգացումին, այդ բոլորը դէպի լոյսը դէպի եղբայրութիւնը, դէպի խաղաղութիւնը, դէպի վերջնական բարօրութիւնը դիմողներուն մէջ ցաւալի և զզուելի է տեսնել մարդիկ, կուսակցութիւն մը՝ և այն ալ Ֆրանսայի նման քաղաքակիրթ և լուսաւորեալ երկրի մը մէջ, որ կը ջանայ կոխկռտել այդ բոլոր գեղեցիկ մտածումներում և իզձերուն վրայ իր զինուորականի կոպիտ կօշիկներով, ետ դառնալ 30—35 տարի և Նաբոլէոն Գ.ի՝ այդ ապիկար և անազնիւ բաղդախնդրին շահատակութիւնը վերակրկնել, պետական հարուածով մը արդի հանրապետութեան փոխարէն կայսրութիւնը հաստատել փորձելով։

Այո՛, կատակ մը չէ։ Ֆրանսական կառավարութիւնը քանի մը ազնիւ մարդկանց ցուցումներուն շնորհիւ կրցաւ վերջերս երեւան հանել թագստոց մը ուր ամբարուած էին հինգ հարիւր զինուորական համազգեստ, տասը հազար փամփուշտ, հրացան եւն, որոնք Ֆրանսական կառավարութեան դէմ կատարուելիք դաւադրութեան մը նախապատրաստութիւններն էին։

Մի ոմն հարիւրապետ Թամպուրինի կրցած է՝ անշուշտ բաւական ազդեցիկ և յայտնի անձնաւորութիւններու հետ՝ որոնց մէջ նոյնիսկ ժէնէրալի մը անունը կը յիշուի, և որոնք շուտով երեւան պիտի հանուին ոստիկանութեան շնորհիւ՝ զանազան պատրուակներով համոզել և հաւաքել անգործ թափառաշրջիկներ, որոնք ինչպէս կերեւի կազմուած ծրագրի մը՝ որոշուած օրը պիտի խուժէին Էլիզէի պալատին՝ հանրապետութեան նախագահի բնակարանին՝ Պատգամաւորներու պալատին, քաղաքային տան եւայլնի վրա, գրաւելով և կանգնեցնելով հանրապետական կառավարութեան գործողութիւնները, մինչդեռ երեւի՝ իրենց ընտրեալը, Թիկնածուն, Վիքթոր Նարոլէոն իշխանը իր կայսերական կառավարութիւնը պիտի յայտարարէր ի ձայն... անմեղ ժողովրդին, իր Ֆրանսացի եղբայրներու վրայ քաշուած թնդանօթներու, ինչպէս իր նախորդը օրինակը տուած էր 1850ին Պուլվար Պոնոնվէլի և քարափներու վրայ..

Թէ մարդիկ կան՝ որոնք 35 տարիներ յետոյ դեռ կը ճգնին ազատութիւնը կայկանդել, խեղդել, այդ չէ որ պիտի զարմացնէ մեզ, բայց անհունապէս ըմբոստացնողը սա հանգամանքն է թէ այդ գծուած անձնաւորութիւնները փոխանակ սկզբունքի մը՝ վիճելի բայց վերջապէս ուն է սկզբունքի մը համոզուած պայապանները ըլլալու, հասարակ բաղդախնդիրներ, կայսերական գահի մը չուրջը հաստաթաբեր պաշտօններ, առատ ռոճիկներ, շուայտ ու փառաւոր կեանք մը և դիւրին հաճոյքներ որոնողներ են՝ հաճոյքներ որոնց գնելու, տիրանալու համար ընդունակ են առանց վարանելու հարիւրաւոր հազարաւոր համարիւն համացեզ Ֆրանսացիներու արիւնով ներկել Բարիզի սալայատակները...

Ֆրանսացի մը՝ որուն զայրոյթս կը յայտնէի դաւադրութեան մասին՝ շատ հանդարտօրէն պատասխանեց։

— Դուք օտարականներդ կը յուզուիք, բայց մենք, օ՜. մեզ համար սովորական բաներ են սոնք. տեսէ՛ք, մենք հոգ անգամ չենք ըներ. ապահով եղէք. հանրապետութիւնը շատ ուժեղ է, և այդ մարդիքը փոքրամասնութիւն անգամ չեն կազմեր։

— Բայց կը տեսնէ՞ք թէ ի՞նչեր կը փորձեն...

— Եւ չեն յաջողիր.

—Անարգոյս և միաբանութիւններու մատը կայ այս գործին մէջ։

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ. գիտէ՞ք թէ եկեղեցին և կառավարութեան բաժանումը շուտով պիտի քուէարկ-

ուի. այդ [illegible] չատ ուրախառիթ չէ կրօնաւորներուն համար... օ՛, կարեւորութենէ զուրկ դաներ են...

Աւսակիցս՝ բարի և համոզուած հանրապետական մը՝ այն տիպարներէն էր որոնք իրենց հաւատամքը գիտեն պատնէշներու վրայ, կարմիր դրօշակի մը տակ, գնդակներուն դիմաց և հրացանը ձեռքերնին պաշտպանել։

Բայց իրողութիւնը ոչ նուազ տրխուր է։ Մինչեւ ե՞րբ՝ նոյնիսկ քաղաքակրթեալ կոչուած երկիրներու մէջ, ազգերու մէջ՝ դրամը պիտի մոռցնել տայ ամեն մի մարդկային պարտաւորութիւն, մինչեւ ե՞րբ մարդկանց պիտի դարձնէ միմեանց յօշոտելու պատրաստ վայրենի գազաններ, մինչեւ ե՞րբ վերջապէս՝ մարդկութիւնը գերի պիտի ըլլայ այդ անիծեալ ու անարգ մետաղին...

ՀՐԱՆՏ

Բարիզ

ՏԱՐՆՈՑ ԵՒ ՍԱՍՆՈՑ ԿԱՐՈՏԵԼՈՅ

Ծանօթ է ռուս և թիւրք սահմանագլխոյ 1902 թուականի խնդիրը՝ որ ըստ ռուսական հրամանի պէտք էր գաղթական հայերը իրենց հայրենիք վերադառնային։ Ցանձնախումբս յիշեալ գաղթականներու թշուառութիւն ի նկատի ունենալով՝ իր պարտականութիւնը կատարելու նպատակաւ սկսեց հանգանակութիւն մը ընել եւ դոյզն ինչ ծառայութիւն մատուցանել։

Թէ հանդանակութենէն և թէ թատերական ներկայացումէն գոյացաւ 1020 ֆրանք։ Ցանձնախումբս յիշեալ գումարը ըստ հրամանի Տ. Տ. Վեհափ. Մկրտիչ կաթողիկոսի ղրկած էր Կարսի Ս Առաջնորդին. մինչեւ յիշեալ գումարի Կարս ժամանելը արդէն գաղթականաց խնդիրը վերջացած էր, Տ. Տ. Վեհ. Կաթողիկոսը սոյն գումարն յանձնախմբիս վերադարձնել տուած և հրամայած էր ապահով տեղ մը պահել ապագային բարենպատակ գործի մը գործածելու համար։

Ցանձնախումբս ի նկատի ունենալով Տարնոյ և Սասնոյ կարօտելոց վիճակը, յարմար տեսաւ սոյն գումարը յիշեալ թշուառ կարօտելոց յատկացնել։

Ռուսի գումարն տոկոսով հանդերձ դրամատունէն առնելով 1091 ֆրանք մարտ 19ին պատրիարքարան ղրկեց յիշեալ կարօտելոց հասցնելու նպատակաւ և պատրիարքարանէն ստացաւ պաշտօնական գրութիւն մը ու հարկ դատեց սոյն գրութիւնը հրատարակութեան տալ ի գիտութիւն եւ ապահովութեան հանդանակութեան մասնակցող պատ. ազգայնոց։

Մնամք յարգանօք

Ատենադպիր Ատենապետ.

Ց. Կ. Ճանկիւլեան Ն. Գ. Քէսատանեան

Գանձապետ

Գալ. Սահաթճեան

* * *

Պատրիարքարան Հայոց

Համար 769

Կ. Պոլիս 26 մարտ

Պատուարժան

Հոգատար Ցանձնախումբ

Վառնայի

Ամսոյս 19 թուականաւ ձեր գրոյն հետ կուղարկէիք մեզ 1091 ֆրանքի փոխանակագիր մը, ծանուցանելով որ այս գումարն հանգանակուած է ժամանակին ձեր նախաձեռնութեամբ Ռուսիայէն իրենց հայրենիքն գաղթող մերազնէից ի նպաստ, բայց իր նպատակին սահմանուած չլինելով կը փափաքիք յատկացնել Տարնոյ կարօտելոց պէտքերուն։

Ձեր զեկուցման համաձայն՝ դանձուած լինելով արդէն այս փոխանակագրի արժէքն պիտի սահմանենք նպաստն անվրէպ իր նպատակին, և կը փափաքինք մեր շնորհակալիքն յայտնել ձեզ հոգածութեան համար, զոր ցոյց տուած էք այս դժբաղդ արկածելոց մասին, որոնք կարօտ են արդարեւ ամեն բարեսէր անձանց ձեռնտուութեան։

Մնամ աղօթարար

Պատրիարք Կ. Պոլսոյ

ՄԱՂԱԳԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊ.

ԱՆԳԼԻԱ ՌՈՒՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

—o—

Սերպ գրագէտ և դիւանագէտ Մեատովիչ, որ Լօնտօն կապրի, Լօնտօնեան շրջանակի մը մէջ հետաքրքրալը յայտնած է այս երեք պետութեանց յարաբերութիւններու մասին։

Անկասկած է որ Անգլիա արտակարգ ճիգեր թափելով կը պատրաստուի Ռուսիոյ հետ պատերազմելու Հնդկաստանի կողմէն։ Փէնէրալ Քիշնէր իր ամբողջ եռանդը և կազմակերպական տաղանդը գործ կը դնէ Հնդկաստանի հիւսիսային սահմանները ամրացնելու համար։ Լաւ գիտակից մարդիկ կը հաւատեն թէ Ռուսիոյ համար անհրաժեշտ է իր վարկը բարձրացնել Ասիոյ մէջ և այդ կրնայ ըլլալ ապացուցելով որ պատերազմի մէջ Ռուսիան Անգլիայէ զօրաւոր է։ Ատոր համար այդ մարդիկը կը թելադրեն որ Ռուսիա հիմակուընէ Հնդկաստան արշաւէ։ իսկ Անգլիան ալ կաշխատի իր սահմանները ամրացնել։

Կան դիւանագէտներ որոնք կը կարծեն թէ դիւանագիտական ամեն էնթրիքի մէջ կը թափանցեն և կը հաստատեն որ Ռուս և Գերմանիոյ միջեւ դաշինք կայ Անգլիոյ դէմ և Անգլիոյ աշխարհիս մէջ առաջնակարգութեան վերջը մօտեցած է։ Գերմանացիները իրենց նպատակներուն հասնելու համար ցարի վրան կազդեն որ բարենորոգումները չը մտցնէ, որովհետեւ կը մտածեն թէ այն ատեն Ռուսիոյ կարող զաւակները անձնատուր պիտի ըլլան ներքին բարեկարգութեան և արտաքին խնդիրներով չի պիտի զբաղին, մինչդեռ անգլիացիք բոլորովին հակառակ դիտումներով, կայսրուհու միջոցով կաշխատին ազդել պալատին վրայ որ Ռուսիան շուտով սահմանադրական ըլլայ և ընտրուած օրէնսդիր մարմին մը ունենայ։

ՀՐԷԱՆԵՐԸ ԵՒ ՆՈՐ ԱՒԵՏԵԱՑ ԵՐԿԻՐԸ

—)o(—

Ցայտնի է որ Անգլիական կառավարութիւնը աշխարհիս բոլոր հրէաներուն առաջարկեց վերաբնակիլ իր հարաւային Ափրիկէի մէջգտնուող մէի կալուածքին վրայ։ Այդ երկիրը ուսումնասիրելու համար մասնաւոր յանձնախումբ մը գնաց, որ կազմուած էր դեր գնդապետ Կիպօնսէն, բրոֆէսօր Քայզէրէն և տօքթ. Վիլպուշէն։

Այդ յանձնախումբը այժմ վերադարձած է և հետաքրքրալ տեղեկութիւնները կուտայ։

Անգլիայի առաջարկած հողին տարածութիւնը 5000 քառ. մղոն է և կը ներկայացնէ բարձր լեռնադաշտ մը։ Այդ հողի վրայ այժմ կը բնակին միայն երեք ճերմակ ափրիկեցիներ։ 25 տարի առաջ հոս կապրի եղեր Մասայի ցեղը։ Այդ լեռնադաշտը բնակելու իտէալական տեղ մը կը ներկայացնէ։

Հարաւային կողմը կապրին աւազակային ցեղեր, որոնք ափրիկէնտէրներուն ապրանքները կը թալնեն։ Հարաւային Ափրիկէի մէջ այդ գեղեցիկ տեղը չը կայ։

Կիպօնս կը կարծէար կարելի է այդ աւազակային ցեղերը զսպել։ Տքր. Վիլպուշը Ափրիկէէն հեռացած է աւելի անմխիթար։ Անոր կարծիքով անհրաժեշտ է որ Սիոնիստները Պաղեստին գաղթեն, բայց ոչ հարաւային Ափրիկէ։

Այնպէս որ հիմակ սիոնիստնե-

Ա. ԱՄՖԻԹԵԱՏՐՈՎ

—

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

—

(Յօնախմբութիւն)

—)o(—

(Գրագէտի յիշողութիւններից։ Ակրան արկածներ բաւական տարօրինակ հանգամանքների մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

21

Ե.

(Շար. նախորդ թիւեն)

—Այդ ձեր գործը չէ, թէ ով է իմ սիրելին պատասխանեցի ես, շարունակում է Վիկտորիան. իսկ Բուրունը։

—Դուք ձեր մասին ստում էք. անունը.

—Ձեր գործը չէ... ու չը գնաց. ոչինչ էլ չը փոխվեց. եւ այժմ նոր տեսակի տեսարաններ է հանդէս բերում։

—Խոստովանեցէք դուք այնժամանակ ստում էի՞ք, թէ ոչ—Ոչ չէի ստում... ո՞վ է նա.— Ձեմ ասի։ —Ուրեմն չեմ հաւատում։ Դուք սրտում էք։— Այո ստում էի... դուք սատանա էք. ես ձեզ կը խեղանդամեմ...

Անուշ խօսակցութիւններ! հաճելի կացութիւն... սկսել է ինձ հետեւիլ իմ սիրեկանիս է փնտռում. ուր ես, նա էլ այնտեղ։ Ամենքին հետեւում է, թէ ում ինչ եմ ասում։ Խօսքից. նայուածքիցս է ուզում բռնել։ Միշտ աշխատում է հեռու մնալ, ստերի միջից դիտել... աչքերը ինկվիզիտորի աչքեր են... թէ ցաւում եմ թէ հեղանում։ Ձեմ սիրում երբ իմ ազատութեան դէմ ոտնձգութիւններ են լինում։

—Սիրոյ հղթաներ են. արդարացնում էի ես։

Վիկտորիան գլուխը շարժելով շարունակում էր.

—Այդ սէր չէ. անձնասիրական խենթութիւնն է նրանում հրահրվել։ Ահա հալիր այդ ոգեւորումների առջեւ. հաւատա այդ զգացումներին, միացիր այդ տեսակ մի թանկագին գանձի հետ, յաւիտենական ստրկութի կը դառնաս. իսկ նա տղամարդկանց ամենալաւերիցն է... կատակ է՞։

Արդէն անիծեալ Ռուսաստանի մասին սկսեց խօսել։ Ռուսաստանը ինձ կանիծէ. եթէ ես պարոն նկարիչ Բուրունի հետ վճռական տեսակցութիւն չեմ ունենում։ Իսկ եթէ այդ տեսակցութիւնը ունենամ, Ռուսաստանը ինձ կօրհնէ՞...

Վիկտորիան կեղծօրէն ծիծաղեց։

—Դուք միանգամ իմ խառնուածքիս մասին խօսեցիք, ատամների արանքով, շարունակեց Վիկտորիան.

—Ճշմարիտ, ես ոչ սառուցի եւ ոչ փայտի կտոր եմ, ընդհակառակը չափազանցօրէն ընդհակառակը։ Եւ խոստովանում եմ ձեզ որ այդ անիծեալ խառնուածքը երբեմն ինձ մղում է դէպի Բուրունը։ Նա գեղեցիկ, կրքոտ եւ հրապուրիչ է։ Մի քիչ յիմար է. անիծեալ Ռուսաստանի մասին շատ է խօսում, բայց անվիճելիօրէն տաղանդաւոր է. եւ չատ գեղեցիկ է։ Ճշմարիտ չաճախ քիչ է մնացել որ վզովը փարիմ եւ յայտարարեմ—սիրում եմ, քոնն եմ։

Ես չարած բազուկներս տարածելով. ասացի։

—Է, էլ ի՞նչու էք սպասում։

Վիկտորիան անհամբերութեամբ ձեռքով կրծքին զարկեցաւ։

—Բայց հասկանում եմ որ այդ պէտք չէ, այլ անպիտան մարմինն է հրապուրում։ Հոգիս լռում է. Բուրունը օտար է նրա համար. իսկ մարմինը ուրախացել է. իրեն յարմարի հոտ առել է եւ գոռում է. եւ անկարելի է որ մարմինը ինձ խաբէ. որ ես տեսակցութեան վայրկեանի համար ազատութիւնս ծախեմ. ու գեղեցիկ սիրամարգի ստրկուհին դառնամ։

Վիկտորիային կանչեցին։

—Նայեցէք, ասացի ես Վիկտորիայի ետեւից, դուք շատ քաջարար էք հարուածում այդ խեղճ մարմինը, եւ ծաղրում։ Ձեզնից վրէժ չը լուծէ՞։ Վիկտորիան կանգնեց, տարօրինակ եւ թէք նայուածքով նայեց, պայծառ ստախօս եւ հանելուկային կարծես լիրը նայուածքով։

ռուն կը մնայ որոշել, արդեօք ձեռք քաշել վաղեմի հայրենիք Պաղեստինէն և երթալ անգլիական հովանաւորութեան տակ, Ջոր հայրենիք մը ստեղծել, չէ թէ ճիգեր թափել իրենց պատմական հայրենիքին մէջ տեղաւորուելու։

Երկու նպատակներն ալ դժուար իրագործելի են, բայց Պաղեստին վերահաստատուիլը աւելի դժուար պիտի ըլլայ. ոչ Սուլթանը պիտի համաձայնի, ոչ զանազան եւրոպական պետութիւններ որոնք աչք ունին Պաղեստինի վրայ։

ՌՈՒՍԻՈՅ ԿԵԱՆՔԷՆ

—()o()—

Ռուս թերթերը շատ կը զբաղին համալսարաններու վերաբացման խնդրով, որոնք գոցուած են բոլոր ուսանողներու գործադուլին պատճառով։

Համալսարանի վարչութիւնները կը շարունակեն զբաղիլ այն խնդրով թէ՝ կարելի է արդեօ՞ք ո և է կերպով պարապմունքները վերսկսիլ. ու եկած են երկու եղրակացութեան։

Մոսկուայի համալսարանի խորհուրդը կը գտնայ որ եթէ անմիջապէս համալսարաններուն ինքնավարութիւն մը տրուի, կարելի է որ դպրոցական գործը կանոնաւոր կերպով ընթանայ։ Մէնչդեռ Բեթերսպուրկի համալսարանի բրոֆէսօրներուն խորհուրդը հակառակ կարծիքի է։ Ան կը մտածէ որ ուսանողական գործադուլին դէմ միջոց չը կայ։ Բեթերսպուրկի համալսարանին բրոֆէսօրները մերժած են ճարտարարուեստից բարձ. դպրոցին բրոֆէսօրներուն, որոնք կը յայտարարեն թէ գործադուլը համալսարաններուն մէջ պիտի շարունակուի, մինչեւ որ Ռուսիոյ պետական կազմութեան ձեւը ընդհանրապէս վերանորոգուի։

Եթէ գալիք տարուան սկիզբին զբաղումները սկսին, պայմանական պիտի ըլլայ, նոյն իսկ ցանկալի բարեկարգումները ներմուծուած պարագային Որովհետեւ բարձրագոյն դպրոցներու մէջ տեղի ունեցած յուզումները, կը գրէ «Սին Օտեչեստվա» թերթը, կը ներկայացնեն երկրին պետական կազմակերպութեան ընդհանուր պակասութեանց մէկ երեւոյթը, ուստի համալսարաններու ինքնավարութիւնն իսկ ան գոհացուցիչ պիտի ըլլայ բարձրագոյն կրթութեան կանոնաւոր ընթացքին համար Ռուսիոյ մէջ։

Ենթադրենք որ կրթական նախարարութիւնը համաձայնի Մոսկուայի բրոֆէսօրներուն կարծիքին հետ. ընդունինք որ սեպտեմբերին համալսարաններու մէջ ներմուծուի երկու ու կէս տարի առաջ Բեթերսպուրկ խորհրդակցութեան հրաւիրուած բրոֆէսօրներուն հիմնական կանոնները. ի՞նչ պիտի ըլլայ։

Համալսարանները ընտրովի բրոֆէսօրներով և վարչութեամբ, դատարանով, պիտի վերաբացուին։ Ակադէմիական հողի վրայ մղուած կռիւը պիտի հասնի բաղձալի հետեւանքին։ Ենթադրենք որ նոր կանոնագիրը աւելի կատարելագործուած ըլլայ քան 1863ինը. ամէն բան կորգի կը մտնայ... բայց միթէ ատով խռովութիւնները կը վերջանա՞ն, միթէ կրնա՞նք երաշխաւորել։ Արդեօք չենք կրնար սպասել հակառակը. այսինքն ամբողջ Ռուսիոյ մէջ գտնուող դժգոհ տարրը չը պի՞տի համախմբուի աղատ համալսարաններուն ընդհանուր ամայութեան մէջ այդ աղատ ովասիսին շուրջը։ Կարելի՞ է որ ուսանող երիտասարդութեան ներկայ տրամադրութիւններու միջոցին դպրոցական կեանքը իր անկախ հոսանքով ընթանայ։ Ի հարկէ ոչ։ Ճշմարտութիւն է որ կրկին յուզումներ պիտի տեղի ունենան, ոչ զուտ դպրոցական տեսակի. այլ ընդհանուր պետական։ Եւ այս վերջին տեսակէնը պիտի ըլլայ միակը, անփոփոխը։

Այն ատեն ի՞նչ պիտի ընեն բրոֆէսօրները։ Կը կարծե՞ն որ պիտի կարենան անուշ խօսքերով երիտասարդութեան գոհացում տալ։ Կարելի՞ է այդպիսի բան մը սպասել, քանի որ պաշտօնական կարթագէնը կործանուած չէ։ Ուր է հոս հանգստութիւնը։

Վերջին տարիները մեզ կը սորվեցնեն թէ ռուս կեանքի ներկայ կազմակերպութեան մէջ բարձրագոյն կրթութիւնը չի կրնար գործադրուիլ ոչ միայն բնական այլ եւ տանելի կերպով։

Ժողովրդին կը մնայ վերջը որոշել արդեօք համալսարաններուն ինքնավարութիւն պէտք է տալ, թէ ս՞չ։

Ռուսիոյ մէջ դեռ համալսարանական խնդիր չը կայ, այլ կայ մէկ ընդհանուր և հիմնական խնդիր մը, «մեր կեանքին ամբողջովին վերակազմումը»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—⁘—

Պատ. խմբ. Շարժում լրագրի

Աստ

Կը խնդրենք որ հաճիք հրատարակել քաղաքիս Աղգ. Երկսեռ վարժարանի աղքատ սաներու և սաներուհիներու ի նպաստ ԳՈՂԹԱՆ Երգեց. խմբի կողմանէ տրուած ներկայացման հետեւեալ հաշիւը։

Տոմսակներէ գոյացած	496 50
Նուէր Տ. Մ. Զգօնեանէ	5 —
Գումար	501,50
ԾԱԽՍ	
Դաշնակի վարձք	10
Նուագածուաց	8
Տոմսերու տպագրութեան	10
Դռնապանին նուէր	1
	29
Մնացած	472,50

այս գումարէն ԳՈՂԹԱՆ խումբը իր պէտքերուն համար վար կը գնէ 0/0ին 20 այսինքն 91 լեմ 50 սանդիմ, որով իր նպատակին գործածելի կը մնայ զուտ 381 լ. որուն 40ը թէեւ ապառիկ՝ սակայն ապահով է։ Այս առթիւ Ցանձնախումբս իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ թէ հասարակութեան որ չի կլծցաւ իր օժանդակութիւնը, և թէ Սաէտինէնիէի սրահի վարձակալ Պ. Տիգրան Թիֆէնկճեանի որ բոլորովին անձնուիրաբար պահք մեր տրամագրութեան տակ դրաւ։

Ցանձնախումբ

Արթաքի Մաշիկեան
Աբրահամ Մատիկեան
Պօղոս Արապեան

ԵՒՐՈՊ. ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂ. ՄԻՈՒԹԻՒՆ

—⁘—

Համագումարը կայացաւ Բէրն քաղաքում, ապրիլ 3ին եւ տեւեց մի շաբաթ հետեւեալ օրակարգով։

ՕՐԱԿԱՐԳ

1905 թուի համագումարի, Բերնում

ՆԻՍՏ Ա — Համագումարի բացումը։ Ընտրութիւն բիւրոյի։ Հաստատումն օրակարգի։

ՆԻՍՏ Բ. — Հաշուետուութիւն Լիա-

—Բայց ի՞նչի դուք կարծում էք որ ես մարմինս սանձում եւ ծաղրում եմ, Միայն մարմինը իր կիրքը ունի, հոգին էլ իրը. այդ երկու զգացումները չեմ ուզում իրար խառնել. դա սրբապղծութիւն կը լինի։

—Այդ շատ հնարամիտ եւ նուրբ է, թանկագին օրիորդ. բայց ինչ որ նուրբ է, նա էլ շուտ է կորվում։

—Այո, այո, ահա այդ պատճառով էլ նուրբ զգայուն դրամաներ չեմ սիրում ես։ Առնուազն սուածը պարզ եւ կոշտ բան է. առանց այն վեհացնող խաբեբայութիւնների, որոնց փնտռում է Բուրուռը։

Եսկ երբ նկատում ես որ խառնուածքը քեզ մղում է կեղծարարութեան, դէպի վեհ խաբեբայութիւններ, պէտք է փախչել։ Աստուած այդ հեքիաթային իշխանիկի հետը որի պատճառով Ռուսաստանը պէտք է անիծէ... Նա լաւ ճաշող ճորտատէր է։ Իսկ ես ուզում եմ ինքս իմ տիրուհին լինել։ Ինձ տէր չեմ վերցնի։ Ուզում եմ նոյն իսկ անձնատուր եղած միջոցիս ինձ տիրուհի զգալ...

Զ.

Բուրուռը ինքզինքը կորցրել էր։ Փառք Աստծու նա այլեւս ինձ հետ շատ չէր խօսում իր սիրոյ մասին, ու կարծես մի բան թագցնում էր։

Վերջին օրերում նա բարեկամութիւն էր հաստատել կարմրաքիթ Իվան Աֆանասիչի հետ, եւ շատ հաւանական է որ իր զգացումները թափում էր նրա աւելի արձագանքող եւ ազնիւ ուշադրութեան խորքերում, միշտ հնաւանդ կոմեդիի հերոսի եւ իր ծառայ, ընկերակցի նման։ Բուրուռը Աֆանասիչի հետ ինքզինքը շատ բարձր էր պահում. ինչպէս հսկան փայփայված պիգմէի հետ։ Աֆանասիչը Բուրուռին քծնում էր, սարկօրէն, ոլորվում օձի նման։ Կարծես սիրահարված լինէր Բուրուռի վրա, անատուածօրէն կեղծաւորում էր եւ միշտ Բուրուռի կողքին էր։ Իր պաշտելիից շատ վիրաւորանքներ էր ստանում, որովհետեւ Բուրուռը իրան համար վատ սովորութիւն էր դարձրել Վիկտորիայի հետ ունեցած ամեն մի ընդհարումից յետոյ՝ բարկութիւնը թափել իր կամաւոր Սանխոպանչօի վրա։

Երկու անգամ ես դժբախտութիւն ունեցայ ներկայ լինել այդ տեսարաններին եւ ցաւելով պէտք է ասեմ որ Բուրուռը ինքզինքը շատ վատ էր պահում, եւ ըմբռնեցի որ Աֆանասիչն էլ գաղտնաբար այնքան քնքուշութեամբ չէ վերաբերվում դէպի իր կուռքը, որչափ այդ ըստ երեւոյթին է։

Փիլիսոփայական հմտերութեան մէջ, որով նա դիմանում էր Բուրուռի ծաղրանքներին, գաղտնի հեգնանքի հետք էր նկատվում, պատասխանում էր Աֆանասիչը։

—Լաւ է, հայհոյիր. յիմարութիւններ արա խեղճ մադուն. կարելի է որ բարձրագոյն իշխանութիւնից ամսու. մէկին խիստ բաժին ես ստացել եւ հիմա լացվում ես։

Արդէն յայտնեցի որ Աֆանասիչը գիւղում կանանց ետեւից էր ընկնում եւ բաւական յաջողութիւն գտնում չը նայելով իր յաճախ արբած եւ զզվված վիճակին։ Բուրուռը Աֆանասիչի այդ թոյլ կողմն էր իր ծաղրանքների նիւթ չինել։ Օրինակ նա հաւատացնում էր որ կալուածքից դուրս գնացած միջոցին իր հետ լուցկի չէր վերցնում, որով եւ դլանիկը կարող էր վառել Աֆանասիչի բոցավառ քթից։ Աֆանասիչը հռհռում էր։

—Ի՞նչ անենք, կրակէ քիթ ունեմ. ճիշդ է. վիճել չեմ կարող. բոց է։ Երիկամունքների ցաւն է յայտարարում եւ դէպի ոգելից ըմպելիքները ունեցածս ձգտումը։ Այդ նրանից է որ ես ծեր եմ եւ օրի եմ խմում։ Երբ երիտասարդ էի օրի չէի խմում ես էլ կանոնաւոր քիթ ունէի գուշատ եւ յունական ձեւով։

—Այսինքն ընկուզի նման... ծաղրում էր Բուրուռը։

Ինձ թւում էր որ հակառակ Աֆանասիչի երեւութական բարեսրտութեան Բուրուռի կատակները ծակում էին Աֆանասիչի սիրտը և չափազանց վիրաւորում։ Սակայն Աֆանասիչն էլ երբեմն կարողանում էր պատասխանել Բուրուռին, եւ կարելի է ասել ոչ առանց նուրբ չարութեան։

Շարունակելի

զօր Կոմիտէի և Կարգ. Յանձնաժողովի —Նախագահ։

ՆԻՍՏ Գ.— Ուսանողական Հայկաբան, — առաջարկութիւն «Բազմավէպի խմբագրութեան։

«Թիւրքահայկական խնդրի դիպլոմատիական գրութիւնը» — դասախօս Բ. Իշխանեանի, Բերլինի համալսարանից։

ՆԻՍՏ Դ.— Ռուսաստանի ներկայ յեղափոխական շարժումը. Կովկասում տեղի ունեցած ջարդերը, — առաջադ. «Կովկաս» խմբի, Ժընեվից։

Յեղափոխական կուսակցութիւններ և Կովկասը—դասախօս Ա. Տ.-եանի, Ժընէվի համալսարանից։

ՆԻՍՏ Ե. — Ուսանող-պրոպագանդիստներ, առաջարկ. Ժընէվի ուսանողների Վերջին դէպքերը Կովկասում, - դասախօս. Ա. Ահարոնեանի։

ՆԻՍՏ Զ. — Յեղափոխական բրոշիւրների խնդիր, — առաջարկ. Ժընէվի ուսանողների և «Ջանք» կոմիտէի։ Նպաստ սոց. բրոշիւրների համար, — առաջարկ. Հայ Սոց. Դեմ. խմբի։

Հայկական բանաստեղծութիւնը, — խմբի։

Հայկական բանաստեղծութիւնը, — դասախօս. Ա. Յակոբեանի, Լօզանի համալսարանից։

ՆԻՍՏ Է.— Քorsա Ֆրադրէսի առաջարկը։ «Յեղափոխական կուսակց. Կովկասում, սոց. դեմոկրատիան եւ ուսանողութեան դերը», — դասախօս. Մ. Ֆնի։

ՆԻՍՏ Ը.— Հրատարակութիւնների և Ժողովածուի խնդիրը—Բերլինի և Ժընէվի ուսանողների կողմից։ Առաջարկներ Լայպցիկի ուսանողութեան վերաբերմամբ կանոնագրութեան։

«Յեղափոխական փիլիսոփայութիւնը — դասախօս. Ռ. Մալումեանի, Ժընէվի համալսարանից (պայմ)։

ՆԻՍՏ Թ.— «Միութեան» գործունէութեան ծրագիրը առաջիկայի համար։

ՆԻՍՏ Ժ. — Որոշումն յառաջիկայ Համագումարի տեղի։ Ընտրութիւն Լիազօր կոմիտէի։ Ընտրութիւն Կարգադիր Յանձնաժողովի։

Համագումարի փակումը։ Համախմբումն։

Ժընէվ մարտ 30

ԱՍՊԵՏԱԿԱՆ ՈԳԻՆ ՄԵՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

—

«Իրաւունք»ի զարթարիացեալ Թղթակից Միքրոպը առիթ կուտայ մեզ երկու խօսք ըսել ասպետական ոգիի մասին։ Վարդանանցի հանդէսին մէջ Փիլիպէի համբաւաւոր տնօրէն Կրօն Միքայէլեան ճառով մը ի վեր հաներ է սա իրողութիւնը թէ՝ մեր ազգին մէջ օր աւուր ասպետական ոգին կը պակսի։ Թղթակից և տնօրէն ոչինչ կը յայտնեն իբր պատճառ այս երեւոյթին։ և այս բանը մեզ կը թելադրէ լրացնել անոնց պակաս թողած կամ մութը ձգած մասերը։

Երբոր գերազոյն բաղձանք կը սեպուի մարդոց մէջ բոլորուիլ շուրջն այն սեղաններուն, ուր ոգելից ըմպելիք կը փայլին ակնախիզ, ազանդներ։ Ճոխ պէս-պէսումի մը ընկերացած և եթէ օր մը մեր բազում մեղացը վրայ, այդ տեսակ մարդիկ ինքզինքին թաղական շինեն և ելլան հէգ որը աղջիկ մը վարկաբեկ ընելու համար ամեն միջոց գործածելն իրենց համար ներելի համարեն, ալ այդ մարդոց քով ասպետական ոգի կրնա՞յ յուսացուիլ։

Ի՞նչպէ՞ս ասպետական կրթութիւն յուսալ Վարժարանէ մը, ուր օրուն հոգաբարձութիւնը կազմուած է այնպիսի մարդոցմէ, որոց համար քերականութեան մասունք բանին կեղծը՝ ճիշդին, սուտն՝ իրաւին տեղ քշելուն հետ կը նոյնանայ և թուաբանութիւնը կը սահմանափակուի արդէն սահմանափակ այդ մտքերուն մէջ։ Ինտագէն վեց ռուպի, մէթրոն ինքսուն սանդիմի և եարտան երեսուն ինչէզի համբելուն մէջ։

Վերջապէս ի՞նչպէս հաւասալ թէ ասպետական ոգի պիտի ներշընչէ աղոց, դասատու մը որուն համբաւը Մաքրի գիւղէն մինչեւ Վառնա, և Վառնայէն մինչեւ Փիլիպէ կը տարածուի։ Որ խիղճ չէ ըրած կոկորդն անցնել այրիին, աղքատին, ծերին ու տընանկին դրամը, և օրուն համար պուլկարահայ մամուլը պատշաճ դատած է Շըմալիէ Տէնտիսմիրի մակդիրը։ Այս չէ մեր փնտռած ասպետական ոգին և այս պատճառաւ ժողովուրդն հեռի կը պահէ իր զաւակները ազգ. վարժարանէն քանի հոն ի պատուի եւ ի պաշտօնի է Կրօն Միքայէլեան։ Եւ իրաւունք ունի ժողովուրդը։

X

Փիլիպէ, 30 մարտ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յալգելի խմբագիր

Կը խնդրեմ որ Ձեր պատ. թերթի միջոցաւ՝ երախտագիտական անկեղծ զգացումներս և խորին շնորհակալութիւններս հրապարակաւ արտայայտել, առ Տիար Տօքթ. Վ. Գուլյումճեանի, որ անձնուիրաբար և ճարտարօրէն դարմանեց՝ թէ ղիս, թէ կինս և թէ զաւակս, բաւական տառապեցուցիչ հիւանդութենէ մը։

Շիտակը ըսելով, Պուլկար կառավարութիւնը մեծ բարիք մը ըրաւ Սիլիսարէցւոց, Տօքթոր Վ. Գուլյումճեանի պէս կարող բը ժիշկի մը՝ քաղաքիս մէջ պաշտօն յանձնելով, վասն զի հոս ճարտար բժիշկի մը պէտքը ըզգալի էր։

Յարգելի Տօքթորը ոչ թէ միայն այդ պակասը կը լրացնէ այլ առողջաբանութեան վրայ՝ իր հրապարակային դասախօսութիւններովը հանրութեան մեծ ծառայութիւն կը մատուցանէ։

Երանի թէ այդ դասախօսութիւնները երբեմն հայերէն լեզուով ալ տեղի ունենային։

Երուանդ Ղօնչիկիւլ

Սիլիսարէ 28 մարտ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ զանազան քաղաքներու մէջ հակայունական միթինկներ տեղի ունեցեր են յոյն հրոսախմբերու Մակեդոնիայի պուլկարներուն հանդէպ բռնած գազանական դիրքին պատճառով։

— Սոֆիայի համալսարանը դեռ բացուած չէ։ Ուսանողներու մէկ մասը հակառակ է ըմբոստացող ուսանողներու չափազանցութիւններուն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պետութեանց դեսպանները Բ. Դրան բողոքագիր մը տուեր են Ռապօրիչան պուլկար գիւղին մէջ յոյն հրոսախմբի ձեռքով տեղի ունեցած կոտորածին պատճառով։

— Եէմէնի կացութիւնը շատ ծանր է։ Յանա քաղաքը, ուր կը գտնուի Բիգա փաշան շուտով անձնատուր պիտի ըլլայ։ Օգնութիւն հասցնելը անկարելի է։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկի վերջին ձերբակալուած յեղափոխականներու մէջ կը գտնուի նաեւ օրիորդ Լէօնդէվա, որը շատ մտերմական յարաբերութեանց մէջ է Բեթերսպուրկի գլխաւոր նահանգապետ Թրէբօվի երկու մօտիկ ազգական օրիորդներու հետ։ Կը կարծուի որ Լէօնթէվային տրամադրութիւնները յայտնի էին այդ երկու օրիորդներուն։ Թէ Լէօնթէվա և թէ Թրէբօվի ազգականուհիները իրենց բարեկամուհուն ձերբակալումէն վերջը փորձեր են անձնասպան ըլլալ։

— Կովկասի նոր փոխարքայ կոմս Վօրոնցով ժողովի պիտի հրաւիրէ Կովկասի ժողովուրդներու ներկայացուցիչներուն խորհրդակցելու համար երկրի տագնապալի կացութեանը վերջ տալու համար։ Փոխարքան յայտարարեր է որ իրեն յանձնուած է հայկական կալուածների գրաւման խնդիրը վերաքննել և շատ հաւանական կը թուի որ կալուածները ետ դարձուին։

— Գանձակի մէջ երկաթուղիի բանուորներէն մօտ հազար հոգի գործադուլ ընելով իշխանութեանց դէմ ապստամբական դիրք բռներ են։

— Մաքսիմ Կորքիի դատը պիտի տեսնուի առանց երդուեալ դատաւորներու մասնակցութեան։

— Պետական խորհուրդը ապրիլ 4ին պիտի զբաղէր տուրքը բարձրացնելու խնդրով, որ առաջ եկած է պատերազմական խոշոր ծախքերու պատճառով։

— Լուս կառավարութիւնը 700 միլիոն բուպլի որոշեր է պատերազմական նոր նաւեր շինելու համար։

— Յարը Սինոդի եկեղեցական ժողով գումարելու համար տուած խնդրագրին վրայ մակագրած է որ այժմ այս գժուարին ժամանակներու մէջ այդ տեսակ, թէև կարեւոր խնդրով զբաղելու ատենը չէ։

ՖՐԱՆՍԱ

Լիմօժ քաղաքի մէջ ապրիլ 3ին Իտալիանտի գործարաններու վերայ յարձակում գործելով այրեր են սղագին օթոմոպիլ մը։ Յետոյ պատնէշներ շիներ և թալներ են զէնքերու խանութ մը։ Երեկոյեան գործաւորները զէնքերու երկրորդ խանութ մը թալներ են 6000 փամփուշտներով։ Հասարակաց և կառավարական շինութիւնները կը պահպանուին զօրքերէն, կացութիւնը ծանր է։ Շորս վաշտ զինուոր պահանջուած է։

Ապրիլ 4ին կացութիւնը աւելի ծանրացած է։ գործարանի տնօրէնին տան քովը ռումբ մը պայթեցուցեր են։ Գործադուլները կարմիր դրօշակներով քաղաքի զանազան փողոցներով պտտեր են։ Նանթի գործաւորներուն եւ ժանտարմաներու միջեւ ընդհարում տեղի ունեցեր է։ Վիրաւորուած են 6 ժանտարմներ և եօթը ոստիկանական պաշտօնեաներ։

ՌՈՒՍ—ՅԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պատերազմի դաշտէն թէ ցամաքի և թէ ծովու կողմէն կարեւոր լուրեր չը կան։ Պալթիկեան նաւատորմիղը արդէն չինական ջուրերու մէջ կը գտնուի և ամբողջ աշխարհին ուշադրութիւնը այդ կողմը դարձած է։ Թէեւ Բոժտէնսվէնսկի կը ձգտի առանց ընդհարումի Վլատիվոստոք հասնիլ, բայց շատերուն կարծիքն այն է որ Թոկիօ պիտի աշխատի ռուս ծովակալը կռուելու ստիպել։ Մէկ խօսքով մոտերս թէ ծովային և թէ ցամաքային մեծ ճակատամարտներ կսպասուին։

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна